

տեղագիր Գոնատէր և Լորտ Քիչնէր երբ շինեցին Պաղեստինի քարտէսը՝ նոյնացուցին երկու անունները: Հետագօտութիւնները գուրս բերին մողայիքներ եւ սիւներ, 90 սմ. խորութենէն գտնուեցաւ բիւզանդական մատուռի մը գրեթէ մէկ երրորդը՝ գեղեցիկ մողայիքներով և երկու թափուր անսովոր գերեզմաններով: Այս գտնուած նոյն փոքր եկեղեցին Ս. Ստեփանոսի գերեզմանն էր, որուն վրայ գրած էր Ղուկիանոս քահանան. անոր իսկութիւնը կը բացատրուի շրջակաները գտնուած ուրիշ բիւզանդական մատուռներու գիւտերովը:

Կափարգամաղայի տեղը Պէյթ-ձէմալը ըլլալուն զօրաւոր ապացոյցներէն մին կուտայ մեզ Մատապայի նշանաւոր մողայիք քարտէսը, որուն վրայ, ճշգորէն Պէյթ-ձէմալի մէջ նշանակուած է Ս. Ստեփանոսի անունը, բայց քանդուած և աւրուած վիճակով՝ անտարակոյս ձեռքովն անոնց որ հակառակորդ էին քրիստոնէութեան և սուրբին քարոզութիւնը իրենց հաճելի չէր:

Ղուկիանոս քահանային պատմութիւնը եւ այս գիւտը համաձայն են, և զոր կը հաստատեն Ս. Ստեփանոսի գերեզմանին ընդհանուր դիրքը, անունը, նոյն թուականի մատրան պեղումներուն արդիւնքը որ հանգամանքը ունին գեղեցկացնելու գերեզման մը, պատուելու սուրբ մը, սարկաւազ մը, գլխաւոր գերեզմանը շրջապատող հարիւրաւոր շիրիմները, անբռնութեամբ քրիստոնեայ սրբավայրի մը յաջորդող մզկիթի մը գոյութիւնը, շրջակայ վանքերուն շրջանը, Ս. Պօղոսի վանքին մերձաւորութիւնը և կարևորութիւնը, անունը, աստուածաշնչական պատմական տեղերը մեզ կը ստիպեն եզրակացնել թէ Պէյթ ձէ-